ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք,

ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ.,
շ.1, Հեռ. (098)048046 , tumanyan.lori@mta.gov.am

N 113
19 ապրիլ 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի, պարոն Նալբանդյան

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 37-Ա - 40-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր՝ Լ Ե Վ Ո Ն Զ Ա Վ Ա Ր Յ Ա Ն

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան
098 048 046

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 37-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՑ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԱԼԻԿ ԱՐՏԱՇԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԻՐ ՏՂԱ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Ընտանեկան Օրենսգրքի >>35-րդ հոդվածի 3-րդ կետով , հիմք ընդունելով Թումանյանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովի դրական եզրակացությունը, Ալիկ Արտաշեսի Գևորգյանի դիմումը և հաշվի առնելով ,որ Ալիկ Արտաշի Գևորգյանը և քաղ.-ուհի Մելինե Մելիքի Խաչատրյանը 2000 թվականից գտնվել են փաստացի ամուսնության մեջ,սակայն նրանց ամուսնությունը ՔԱԳՍ-ում գրանցված չի եղել և մինչև Մելինե Խաչատրյանի ինքնակամ հեռանալը բնակվել են համատեղ ,ունեցել են չորս տղա երեխա,որից միայն երկու երեխայի՝ Ալիկ Ալիկի Գևորգյանի /ծնված 25.01.2003թ./ և Սերգեյ Ալիկի Գևորգյանի /ծնված 29 .05.2011թ./հայրությունն է ճանաչվել Ա.Գևորգյանի կողմից, քաղ.-ուհի Մելինե Մելիքի Խաչատրյանը 2016 թ.սեպտեմբեր ամսին փոքր երեխայի՝ Սերգեյ Ալիկի Գևորգյանի հետ միասին ինքնակամ լքել է ամուսնուն և երեք երեխաներին ,այնուհետև 2016թ.դեկտեմբերի 8-ին նրանք դուս են գրվել Թումանյան համայնքի Մարց գյուղի հաշվառումից և ըստ մեզ հասած տվյալների տեղափոխվել են ՌԴ և բնակության վայրը հայտնի չէ՝
Որոշում եմ.

Համաձայնություն տալ քաղ.-ուհի Մելինե Մելիքի Խաչատրյանից 2005 թվականի մայիսի 9-ին ծնված տղա երեխայի՝ Կարեն Ալիկի Խաչատրյանի և 2008 թվականի փետրվարի 9-ին ծնված տղա երեխայի՝ Արտաշես Ալիկի Խաչատրյանի նկատմամբ հայր ճանաչել Թումանյան համայնքի Մարց գյուղի բնակիչ՝ Ալիկ Արտաշի Գևորգյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 38-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 438-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 15-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի տարածքում 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 61-Ն որոշումը և Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի բնակիչ ԱՁ Լիդա Կարապետյանի հայտը.

1.Թույլատրել Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի բնակիչ ԱՁ Լիդա Կարապետյանին՝2017թ. ապրիլի 1-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 39-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ ՕՐԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 42-րդ հոդվածի 1-ին մասի 15,16 և 22-րդ կետերով և հիմք ընդունելով Լոռու մարզպետի 14.04.2017թ. թիվ 101/107.4/1865-17 գրությունը՝
որոշում եմ.

1.2017թ.ապրիլի 22-ը և 29-ը հայտարարել համայնքային շաբաթօրյակի օրեր և կազմակերպել աղբահանություն,սանիտարական մաքրման,ինչպես նաև համայնքի բնակավայրերի մաքրման աշխատանքներ:
2. Հանձնարարել համայնքի կազմի մեջ գտնվող բնակավայրերի վարչական ղեկավարներին և բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին՝անկախ սեփականության ձևից.
1/բնակավայրերի հասարակական վայրերում,հիմնարկ- ձեռնարկներում, ավտոճանապարհների և երկաթգծի/եթե այդպիսին կա/ հարակից տարացքներում, բնակավայրերի կենտրոններում կատարել սանիտարական մաքրման աշխատանքներ՝ տարվա ընթացքում կուտակված աղբից, մոլախոտերից մաքրել շրջակա միջավայրը,
2/ բնակավայրերի հասարակական վայրերում,հիմնարկ- ձեռնարկներում, ավտոճանապարհների և երկաթգծի/եթե այդպիսին կա/ հարակից տարածքներում պահպանել կանաչ տարածքները և, հնարավորության դեպքում, կատարել ծառատունկ,
3/ շաբաթօրյակի օրերին պահպանել աղբատար ավտոմեքենայի անխափան աշխատանքը, կազմակերպել աղբահեռացում:
3. Այդ աշխատանքներին ներգրավել նաև համայնքի ավագանիներին, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին, դպրոցի աշակերտներին, մանկավարժներին և համայնքի բնակչությանը:
4.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետի տեղակալ՝ Երվանդ Շաքարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 40-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝
որոշում եմ.

1.Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոններ զբաղեցնելու համարա առաջին կարգի մասնագետի /ծածկագիր՝3.2-5/ և երկու երկրորդ կարգի մասնագետների /ծածկագիր՝3.3-1/ և /ծածկագիր՝3.3-2/համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2017թվականի մայիսի 31-ին՝ ժամը 13:00-ին Թումանյանի համայքապետարանում անցկացնել մրցույթներ:
2.Մրցույթների անցկացման մասին տալ հայտարարություն http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմին:
4.Մրցութային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել Ռուզաննա Շահվերդյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**